## *ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

## *ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ*

Պատվիրատուն՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան Մելիք Ադամյան 1 հասցեում, ստորև ներկայացնում է ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/22 ծածկագրով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի արդյունքում 2015թ-ի դեկտեմբերի 4-ին կնքված պայմանագրում 2015թ-ի դեկտեմբերի 18-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ 1: Ծառայությունների մատուցման գործընթացը սկսելու նպատակով նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Փոփոխության նկարագրություն: Կողմերը համաձայնագրով հաստատել են ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույցը:

Փոփոխության հիմնավորում: Փոփոխությունը կատարվում է ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգով սահմանված պայմաններին համապատասխան՝ Պայմանագրի 7.1 կետի համաձայն:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ. Ջանջուղազյանին:

Հեռախոս՝ 094 49 13 38:
Էլ.փոստ՝ info@interlimens.com:
Պատվիրատու՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
2015թ. դեկտեմբերի 4-ին կնքված N ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/22 պայմանագրի

ք. Երևան "...18..." դեկտեմբերի 2015թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Արզումանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Այյունեթվորքս» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Եսայանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև Կողմեր, հիմք ընդունելով Կողմերի միջև 04/12/2015թ. կնքված N ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/22 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.1 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. Համաձայնագրի առարկան

1.Կողմերը որոշեցին՝

1.1 հաստատել Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույցը՝ համաձայն Համաձայնագրի հավելված 1-ի.

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ ֆինանսների նախարարություն | «Այյունեթվորքս» ՍՊԸ |
| ք. Երևան, Մելիք Ադամյան 1 | ք. Երևան, Պուշկինի 38/1 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | «Ամերիաբանկ» ՓԲԸ |
| ՀՎՀՀ 02629081 | ՀՎՀՀ 02588485 |
| Հ/Հ 900000900986 | Հ/Հ 1570015606460100 |
| ------------------------ (ստորագրություն) | ------------------------ (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 1
"04" դեկտեմբերի 2015թ. կնքված
N ՖՆ-ԲԸՀԾՁԲ-15/22 պայմանագրի հիման վրա
"...18..." դեկտեմբերի 2015թ. կնքված համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ՖՆ 2015թ. միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում | |
|---|---|---|
| | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| ՀՀ ՖՆ մաքսային ծառայությունների մոնիթորինգային կենտրոնի ստեղծման /տեղադրման/ ծառայություններ | 499257000 | 499257000 |

* *Գումարները ներկայացված են աճողական:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ֆինանսների նախարարություն
ք. Երևան, Մելիք Ադամյան 1
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02629081
Հ/Հ 900000900986

------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Այյունեթվորքս» ՍՊԸ
ք. Երևան, Պուշկինի 38/1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02588485
Հ/Հ 1570015606460100

------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.